

## ԵՊԲՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

### 1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

1.1. ԵՊԲՀ սույն չափորոշիչը սահմանում է ԵՊԲՀ հանրային առողջության ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտների մագիստրոսական թեզի կառուցվածքը, տեքստային նյութի, հավելվածների ձևավորման կարգը, պաշտպանության ընթացակարգն ու ժամանակացույցը:

1.2. Չափորոշիչը մշակված է Եվրոպական բարձրագույն կրթության ավարտական որակավորմանը ներկայացվող իրազեկությունների հաշվառմամբ, ՀՀ «Կրթության մասին», «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքների համաձայն, բարձրագույն մասնագիտական կրթության նորագույն չափորոշիչների պահանջներին համապատասխան:

1.3. Սույն չափորոշիչով սահմանված պահանջները տարածվում են հանրային առողջության ֆակուլտետի մագիստրատուրայի բոլոր կրթական ծրագրերով սովորող շրջանավարտների վրա:

### 2. ՆՈՐՄԱՏԻՎ ՀՂՈՒՄՆԵՐ

2.1. Չափորոշիչում եղած հղումները համապատասխանում են ՀՀ «Կրթության մասին» օրենքին եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքին, Բոլոնիայի գործընթացին եւ կրթական բարեփոխումների Եվրոպական փաստաթղթերի պահանջներին:

### 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### 3.1. Մագիստրոսական թեզի պաշտպանություն

3.1.1. ԵՊԲՀ-ում մագիստրոսական թեզի պաշտպանությունը անց է կացվում Եվրոպական բարձրագույն կրթության ավարտական որակավորմանը ներկայացվող պահանջների համաձայն, ՀՀ ԿԳՆ հրամանով հաստատված ՀՀ բուհերի շրջանավարտների (մագիստրոս) ամփոփիչ պետական որակավորման մասին դրույթներով, սույն չափորոշիչով:

3.1.2. ԵՊԲՀ-ում մագիստրոսական թեզերի պաշտպանության համար կազմվում են մագիստրոսական թեզերի պաշտպանության /պետական/ որակավորման հանձնաժողովներ (այսուհետ՝ ՄԹ ՊՈՀ)՝ ըստ բարձրագույն մասնագիտական կրթության յուրաքանչյուր հիմնական կրթական ծրագրի:

3.1.3. ՄԹ ՊՈՀ-ի աշխատանքների ժամանակացույցը կազմվում է համալսարանի ուսումնական մասի կողմից:

3.1.4. Մագիստրոսական թեզի պաշտպանությունը՝ կրթության համապատասխան փուլում, հանդիսանում է ուսուցման կարեւորագույն արդյունք: Այդ պատճառով աշխատանքի պարունակությունն ու նրա պաշտպանության մակարդակը պետք է հաշվի առնվեն որպես շրջանավարտի պատրաստվածության աստիճանի գնահատման հիմնական չափանիշ եւ համալսարանում կրթական ծրագրերի իրականացման որակի գնահատական:

3.1.5. Մագիստրոսական թեզի (ՄԹ) պաշտպանությունը, ուսանողի համալիր, ինքնուրույն աշխատանքն է, որի գլխավոր նպատակն ու բովանդակությունը մասնագիտության պրոֆիլին համապատասխանող տեսական կամ գործնական բնույթի հարցերից մեկի բազմակողմանի վերլուծությունն է, գիտական հետազոտությունը կամ մշակումը:

3.1.6. ՄԹ-ի արդիականության, թեմատիկայի համապատասխանության, ղեկավարման, կատարման եւ կազմակերպման համար պատասխանատու է թողարկող ամբիոնը եւ աշխատանքի անմիջական ղեկավարը:

3.1.7. ՄԹ-ում շարադրված բոլոր տեղեկությունների, ընդունած որոշումների եւ բոլոր տվյալների ճշգրտության համար պատասխանատու է ուսանողը՝ մագիստրոսական թեզի հեղինակը:

3.1.8. ՄԹ-ի բովանդակության, կառուցվածքի, ներկայացման ձևի եւ ծավալի վերաբերյալ պարտադիր պահանջները սահմանվում են սույն փաստաթղթով:

3.1.9. ՄԹ-ն կազմված է տեքստային բաժնից եւ հավելվածներից:

3.1.10. ՄԹ-ի տեքստային մասը պետք է նվիրված լինի բազմակողմանի վերլուծությունների, գիտական հետազոտությունների կամ մշակումների, որոնք ուղղված են ՄԹ-ի առաջադրանքներում ձեռնարկված խնդիրների լուծմանը:

3.1.11. ՄԹ-ի հավելված նյութը ներկայացվում է պատասխանների, նկարների, գրաֆիկների, սխեմաների, լուսանկարների, աղյուսակների եւ այլնի տեսքով: Հավելված նյութի կիրառման նպատակը ՄԹ-ի պաշտպանության ժամանակ աշխատանքի հիմնական մասերի ցուցադրումն է, որոնք արտահայտում են կատարված տեսական հետազոտությունների եւ կիրառական մշակումների, եզրակացությունների եւ երաշխավորագրերի էությունը: Միեւնույն ՄԹ-ի համար թույլատրվում է մատուցել հավելյալ նյութի տարբեր ձևերի համակցում:

3.1.12. ՄԹ-ի պաշտպանությունն իրականացվում է ՄԹ-ի ՊՈՀ-ի նիստում:

### **3.2. Մագիստրոսական թեզի նպատակները**

3.2.1. ՄԹ-ի իրագործումը ԵՊԲՀ հանրային առողջության ֆակուլտետի մագիստրատուրայում ուսանողի ուսուցման ամփոփիչ փուլն է: ՄԹ-ի նպատակներն են՝

-տեսական գիտելիքների ընդլայնում, ամրապնդում եւ համակարգում, գիտական, մասնագիտական խնդիրները լուծելիս այդ գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների ձեռքբերում,

- տեսական եւ փորձարարական որոշումներ ընդունելու հմտությունների զարգացում, փորձի ձեռքբերում տեսական, փորձարարական հետազոտությունների մշակման, վերլուծության եւ համակարգման, ինչպես նաեւ նրանց գործնական նշանակության եւ կիրառման հնարավոր ոլորտի գնահատման մեջ,

- փորձի ձեռքբերում սեփական գործունեության արդյունքների ներկայացման եւ

հրապարակայնորեն պաշտպանելու ոլորտում:

### ***3.3. Մագիստրոսական թեզի խնդիրները***

3.3.1. ՄԹ-ի իրագործման ընթացքում, դրան առաջադրված պահանջներին համապատասխան, որոշվում են հետևյալ խնդիրները՝

- ըստ որակավորման աշխատանքի թեմայի՝ համակարգվում եւ վերլուծվում է տեսական նյութը,
- որոշվում են հետազոտության օբյեկտն ու մեթոդները,
- իրականացվում է ելակետային տվյալների հայթայթումը, որոնք անհրաժեշտ են տվյալ հետազոտության թեման վերլուծելու համար,
- կատարվում է հավաքված գրականության, տեղեկությունների վերլուծություն, եւ այդ վերլուծությունների արդյունքներից ելնելով՝ ձեւավորվում են որոշումներ,
- կատարվում են տեսական եւ փորձարարական հետազոտություններ, իրականացվում է տեսական նյութի մշակում,
- տեսականի եւ փորձարարական հետազոտությունների հիման վրա մշակվում եւ շարադրվում են առաջարկությունները:

### ***3.4. Մագիստրոսական ատենախոսության թեմաները***

3.4.1. ՄԹ-ի թեմաներն որոշում են այն ամբիոնները, որոնք թողարկող են հանդիսանում համապատասխան մասնագիտությունների համար: Մագիստրանտն ինքը կարող է առաջարկել իր թեման՝ բերելով դրա մշակման անհրաժեշտության հիմնավորումները:

3.4.2. Մագիստրանտին իրավունք է տրվում սահմանված կարգով ընտրել ՄԱ-ի թեման:

3.4.3. ՄԹ-ի թեման հաստատվում է ԵՊԲՀ հանրային առողջության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում:

3.4.4. ՄԹ-ի թեմաներն ընտրելիս հարկավոր է առաջնորդվել հետևյալ դրույթներով՝

- թեմայի արդիականությունը,
- արդյունքների գործնական կարելությունը մասնագիտական տեսանկյունից
- աշխատանքի մեջ նոր մշակումների, մեթոդաբանության, հետազոտման եւ արտահայտման անհրաժեշտությունը:

### ***3.5. Մագիստրոսական ատենախոսության առանձնահատկությունները մագիստրոսի որակավորում ստանալու համար:***

3.5.1. ՄԹ-ն իրենից պետք է ներկայացնի ավարտուն տեսական կամ փորձարարական գիտահետազոտական աշխատանք, որը կատարված է ինքնուրույն, կապված է արդիական գիտահետազոտական խնդրի լուծման հետ, որոշվում է պատրաստման ուղղության յուրահատկությամբ եւ ընտրված է պատրաստման ուղղության մագիստրոսական ծրագրով:

3.5.2. ՄԹ-ը պետք է ապահովի մասնագիտական գործունեության նախընտրած ոլորտում ակադեմիական մշակույթի ամրապնդում եւ մեթոդաբանական պատկերացումների ու մեթոդական հմտությունների ամբողջություն: Մագիստրոսի աստիճանը նախ եւ առաջ արտացոլում է ԵՊԲՀ-ի հանրային առողջության ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտի կրթական մակարդակը, վկայում է սկսնակ գիտական աշխատակցին հատուկ ընդունակությունների եւ հմտությունների առկայության մասին:

3.5.3. ՄԹ-ը իրականացվում է ստացված գիտելիքների եւ գործնական հմտությունների հիման վրա, որոնք ուսանողը ձեռք է բերել ուսուցման ժամանակահատվածում եւ

մագիստրատուրայում անցած արտադրական պրակտիկայի եւ գիտահետազոտական աշխատանքի արդյունքում:

3.5.4. ՄԹ-ի պատրաստումը տեղի է ունենում 3- 4-րդ կիսամյակների ընթացքում:

3.5.5. ՄԹ-ի պատրաստման եւ պաշտպանության գործընթացում մագիստրոսը պետք է ցուցաբերի՝

-ինքնուրույն ստեղծագործական մտածելակերպ

-աշխատանքի ընթացքում կատարվող հետազոտությունների մեթոդաբանության տիրապետում,

-ձեռքբերված արդյունքների գիտական վերլուծության, աշխատանքի ընթացքում ստացված (պաշտպանվող) եզրակացությունների եւ դրույթների մշակման ընդունակություն,

-գործնական եւ գիտական գործունեության մեջ ստացված արդյունքների օգտագործման հնարավորությունները գնահատելու կարողություն:

3.5.6. ՄԹ-ի գիտական ղեկավար կարող են նշանակվել, մասնագիտական ամբիոնի, համալսարանի ամբիոնների պրոֆեսորները կամ դոցենտները, կամ էլ գիտական եւ գիտահետազոտական հաստատությունների գիտաշխատակիցները: Մագիստրոսական ատենախոսության ղեկավարը պետք է ունենա գիտությունների թեկնածուի, դոկտորի գիտական աստիճան կամ հանրային առողջապահության մագիստրոսի աստիճան:

3.5.7. Այն դեպքում, եթե ՄԹ-ը կրում է զուգադրական, միջառարկայական բնույթ ապա թողարկող ամբիոնին իրավունք է տրվում հրավիրել գիտական խորհրդատուների՝ ըստ աշխատանքի առանձին բաժինների:

3.5.8. Մագիստրոսը մագիստրոսական թեզի վրա աշխատում է անմիջապես թողարկող ամբիոնում կամ էլ գիտական, գիտահետազոտական կազմակերպություններում, որոնց հետ կապված է գիտահետազոտական աշխատանքի կատարումը:

3.5.9. Մագիստրոսական թեզի բովանդակությունը պետք է ըստ թեմայի, աշխատանքի էության իր մեջ ներառի՝

□ առաջ քաշված խնդրի վերլուծությունը, որը կատարվել է գիտական եւ արտոնագրված աղբյուրների ուսումնասիրման հիման վրա,

□ գիտական, գիտահետազոտական կամ գիտամեթոդական ուղղության խնդրի ձեւակերպում,

□ խնդրի լուծման մեթոդի կամ միջոցի առաջարկ կամ հիմնավորում,

□ մագիստրոսի կողմից կատարված տեսական, փորձարարական

հետազոտությունների նկարագրում,

□ ստացված արդյունքներն ու նրանց քննադատական վերլուծություն,

□ ստացված արդյունքները գիտական, գործնական եւ դասախոսական

գործունեության մեջ օգտագործելու եզրահանգումներ, առաջարկություններ՝

հաշվի առնելով նրանց նորամուծության եւ գերակայության պաշտպանությունը,

□ օգտագործված գրականության ցանկ:

### **3.6. ՄԹ-ի կառուցվածքն ու ծավալը**

3.6.1. Մագիստրոսական ատենախոսության ծավալը պետք է լինի 30-40 տպագրական էջ, որը չի ներառում տիտղոսաթերթը և հավելվածները: Որոշ դեպքերում էջերի քանակը կարող է տատանվել՝ կախված թեմայի բնույթից: ՄԹ-ը պետք է ունենա հետեւյալ բաղադրիչ մասերը՝

□ սահմանված ձեւի տիտղոսաթերթ,

□ բովանդակություն,

□ համառոտագիր

□ ներածություն՝ ներառելով աստենախոսության հիմնական դրույթները (3 էջ),

□ գրականության տեսություն

Աշխատանքի թեմայի վերաբերյալ գրականության տեսական վերլուծությունը չպետք է գերազանցի ընդհանուր ծավալի 1/3, իսկ 2/3 հատկացվում է ուսանողի կողմից կատարված ինքնուրույն վերլուծությանը:

Հիմանական մաս

□ հետազոտության նյութը և մեթոդները

□ հետազոտության արդյուքները

□ հետազոտության քննարկում

□ եզրակացություններ և առաջարկություններ

□ օգտագործված գրականության ցանկ

Գրականության ցանկը կարելի է ներկայացնել այբբենական կարգով՝ նշելով հղումների համարները տեքստում: Ցանկում աղբյուրները պետք է ընդգրկեն՝ հեղինակի/ների/ ազգանունը եւ անվան առաջին տառը, նյութերի լրիվ անվանումը, հրատարակության տվյալները /տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջերը/: Տեղեկատվական պաշտոնական, այդ թվում՝ էլեկտրոնային աղբյուրների, համակարգչային ծրագրերի, հաշվետվությունների, հրահանգների, հեղինակային իրավունքի արտոնագրերի, պատենտների դեպքում ներկայացվում են լրիվ տվյալները: Աղբյուրների նկարագրությունը բերվում է բնօրինակի լեզվով:

□ հավելված՝ հապավումների, միավորների եւ տերմինների ցանկ (անհրաժեշտության դեպքում), աղյուսակները, գծապատկերները, նկարներ, հարցաթերթերը, հետազոտության իրազեկված համաձայնության ձևը և այլն:

3.6.2. Մագիստրոսական աստենախոսությունն ենթարկվում է գրախոսմանը եւ կանոնակարգային ստուգման:

#### ***4. ՄԱ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԵՐԻ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ***

##### ***4.1. Տեքստի ձևավորման պահանջներ***

4.1.1. ՄԹ-ի տեքստը պետք է հավաքվի համակարգչով՝ A4 ֆորմատի սպիտակ թղթի վրա (210 X 297) յուրաքանչյուր թղթին 1 էջ 1.5 միջակայքով, սեւ գույնով, Sylfaen 12 տառաչափով: Էջերը պետք է ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30 մմ, վերեւից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ, ներքեւից՝ 25 մմ:

4.1.2. ՄԹ-ի տիտղոսաթերթն առաջին էջն է, որը չի համարակալվում, լրացվում է ըստ ՄԹ-ի ձեւի՝ համաձայն Հավելված Ա-ի:

4.1.3. ՄԹ-ի բոլոր էջերը, ներառյալ լուսաբանող նկարները, աղյուսակները, գծապատկերները, հավելվածը եւ այլն, համարակալվում են: Նկարները, աղյուսակները և գծապատկերները վերնագրվում են և նշվքում է օգտագործվող տվյալների սկզբնաղբյուրը և տարեթիվը:

4.1.4. ՄԱ-ի բոլոր ձեւերի, թեմաների անվանումները գրվում են ուղիղ գլխատառերով (մեծատառերով)՝ (տառաչափը՝ 14):

##### ***4.2. Բովանդակությունը***

4.2.1. Բովանդակությունը (ցանկը) պետք է համապատասխանի ՄԹ-ի տեքստին: Բովանդակությունը սկսվում է ներածությունից եւ ընդգրկում է բոլոր բաժինների,

ենթաբաժինների, ինչպես նաև կետերի, ենթակետերի (եթե նրանք անվանում ունեն) անվանումները, եզրակացությունները և առաջընթացությունները, օգտագործված աղբյուրների ցանկը, հավելվածների անվանումն ու նշանակությունը՝ նշելով այն էջերը, որտեղից սկսվում են ՄԹ-ի տվյալ տարրերը: Բովանդակությունը չի ներառում տիտղոսաթերթը:

### **4.3. Համառոտագիր**

**4.3.1.** ՄԹ-ի համառոտագիրը պետք է ներառի թեզի ուսումնասիրության խնդիրը, նպատակը(ները), հետազոտության ընթացքում կիրառված մեթոդների, արդյունքների և եզրակացության հակիրճ նկարագրությունը:

### **4.4. Ներածությունը**

4.4.1. Մագիստրոսական թեզերի համար ներածությունը պետք է արտահայտի հետևյալ կետերը՝

- մագիստրոսական ատենախոսության թեմայի արդիականությունը
- աշխատանքի նպատակներն ու խնդիրները,
- հետազոտության օբյեկտի եւ առարկայի նկարագրությունը

### **4.5. Հիմնական մասը**

4.5.1. ՄԹ-ի հիմնական մասը պետք է պարունակի բաժիններ, որոնք արտահայտում են առաջադրանքին համապատասխանող հիմնական խնդիրների էությունը, մեթոդաբանություն, լուծումը եւ աշխատանքի հիմնական արդյունքները:

4.5.2. ՄԹ-ին վերաբերող առաջադրանքին համապատասխան՝ հիմնական մասը կարող է պարունակել՝

ա) հետազոտությունների ուղղության ընտրություն, որը ներառում է հետազոտության ուղղության հիմնավորումը, խնդիրների լուծման մեթոդները եւ նրանց համեմատական գնահատականը: Այս բաժնում տրվում է հետազոտության խնդրի ընտրության տեսական հիմնավորումը: Այն կատարվում է աղբյուրների վերլուծության հիման վրա, որտեղ առաջարկվում է հետազոտության խնդրի վերաբերյալ սեփական տեսակները, արվում են թեմայի արդիականությունը վերաբերող դատողություններ,

բ) տեսական եւ (կամ) փորձարարական հետազոտությունների նկարագրությունը, ինչպես նաև տեսական հետազոտությունների բնույթի եւ բովանդակության որոշումը, հետազոտությունների մեթոդներն ու արդյունքները, փորձարարական աշխատանքների անցկացման անհրաժեշտության հիմնավորումը, մշակված օբյեկտների գործունեության սկզբունքները, նրանց բնութագրումը եւ փորձարարական մասը նկարագրելիս շարադրվում են հետազոտության ընդհանուր ամբողջականությունը եւ հիմնական մեթոդները, խնդիրների լուծման «ալգորիթմերը», գ) հետազոտությունների արդյունքների ընդհանրացումն ու գնահատականը, առաջադրված խնդրի լուծման գնահատականը, ստացված արդյունքների արժանահավատության գնահատականը, հիմնավորումը եւ աշխատանքի արդյունքներն օգտագործելու վերաբերյալ առաջարկները:

4.5.3. Հիմնական մասի բաժինների քանակը համաձայնեցվում է ղեկավարի հետ: ՄԹ-ի հիմնական նյութի բաշխումն ըստ հիմնական մասի բաժինների, ենթաբաժինների եւ այլն, որոշվում է ՄԹ-ի հեղինակի կողմից:

4.5.4. ՄԹ-ի տեքստը պետք է բավարարի ավարտված աշխատանքներին առաջադրվող հիմնական պաշտոնական պահանջները՝ այն է կառուցվածքի կշռադատություն,

տրամաբանվածությունն եւ հաջորդականությունն, բերված տեղեկությունների ճշգրտությունն, նյութի պարզ եւ հակիրճ շարադրում:

#### **4.6. Վերջաբանը**

4.6.1. Վերջաբանը պետք է պարունակի ՄԱ-ի արդյունքներին վերաբերող հակիրճ դատողություններ (մեկնաբանություններ)՝ առաջադրանքի կատարման ամբողջականության եւ գնահատման, խորհրդատվություն, աշխատանքի արդյունքները տեսականորեն եւ գործնականորեն կիրառելու վերաբերյալ:

#### **4.7. Օգտագործված գրականության ցանկը**

4.7.1. ՄԹ գրելու ընթացքում հաճախ հարկավոր է օգտվել տարբեր հեղինակների աշխատանքներից՝ կատարել հղումներ եւ անել մեջբերումներ՝ հղման ընդունված համակարգերից որեւէ մեկով՝ տողատակերում, տեքստում կամ համարակալմամբ: Մեջբերված կամ հիշատակված աղբյուրների ցանկը պետք է ամբողջական տեղեկություններ պարունակի այդ աղբյուրների եւ ինտերնետային տեղեկատվական ռեսուրսների մասին: Էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու դեպքում պարտադիր նշվում է հղումը եւ վերջին անգամ այդ նյութից օգտվելու ամիս/ամսաթիվը:

#### **4.8. Հավելվածները**

4.8.1 ՄԹ-ի հիմնական մասը լրացնող նյութը ձեւակերպվում է հավելվածների տեսքով: Խորհուրդ է տրվում հավելվածների մեջ ներառել կատարված աշխատանքներին վերաբերող նյութեր, որոնք որոշ պատճառներով չեն ընդգրկվել հիմնական մասում: Նպատակահարմար է հավելվածներում կիրառել գրաֆիկական նյութեր, աղյուսակներ, հարցաթերթեր, տեղեկացված համաձայնության ձևեր: Եթե ատենախոսությունը պարունակում է գրաֆիկական նյութ, ապա նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումների բացատրությունները տրվում են ներքեւում կամ վերեւում:

4.8.2. Աղյուսակները կարելի է տեղադրել ուղղաձիգ, հորիզոնական դիրքով, յուրաքանչյուր աղյուսակ պետք է համարակալել վերելի աջ անկյունում արաբական թվերով, որի տակ գրվում է անվանումը: Եթե մեկ թերթի վրա աղյուսակը չի տեղավորվում, պետք է շարունակել մյուս թերթի վրա:

4.8.3. Տեքստում բոլոր հավելվածների վերաբերյալ պետք է վկայակոչումներ կատարել:

4.8.4. Հավելվածները գրվում են հայերենի այբուբենի գլխատառերով՝ սկսելով «Ա»- ից: «Հավելված» բառին հաջորդում է նրա հաջորդականությունն արտահայտող տառը, օրինակ՝ Հավելված Ա: Եթե աշխատանքում կա մեկ հավելված, այն նշվում է որպես Հավելված Ա:

4.8.5. Հավելվածները պետք է ՄԹ-ի մնացած մասի հետ ունենան էջերի ընդհանուր միջանցիկ համարակալում:

### **5. ՄԱԳԻՍՏՐՈՍՍԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

5.1. Մագիստրոսական թեզի կատարման փուլերը՝

նախապատրաստական և հետազոտական պլանի ներկայացում՝ ըստ սահմանված ձևաչափի (Հավելված Բ)

հետազոտական պլանի հաստատում էթիկայի կոմիտեյի համձնաժողովի նիստում

կատարողական

ձևակերպման

□ մշտադիտարկում(մոնիթորինգ)

□ գրախոսում

□ ՄԹ-ի ՊՈՀ-ում աշխատանքի պաշտպանություն

5.2. Ընտրելով հետազոտության թեման՝ մագիստրանտը հավաքում է անհրաժեշտ տվյալներ, ուսումնասիրում է հետազոտությանը կամ մշակմանը վերաբերող գրականություն, անց է կացնում համանման խնդիրների շրջանակներում գոյություն ունեցող գրականության վերլուծություն և ներկայացնում է հետազոտական աշխատանքի նախնական պլանը:

5.3. Հետազոտական պլանը մագիստրանտը ներկայացնում է ԵՊԲՀ էթիկայի հնձնաժողովին՝ քննարկման և հաստատման համար:

5.4. Կատարողական փուլն աշխատանքի կատարման բուն ժամանակահատվածն է, որը ներառում է տեսական, գործնական, հետազոտական աշխատանքներ եւ կազմում ՄԹ-ի կատարման համար հատկացված ժամանակի հիմնական մասը:

5.5. Ձեւակերպման փուլը ներառում է ՄԹ-ի տեքստի պատրաստումը եւ պաշտպանության համար անհրաժեշտ այլ նյութի ձեւավորումը սույն չափորոշիչի պահանջներին համապատասխան:

5.6. Մշտադիտարկումն անց է կացվում ուսանողների ատենախոսության թեմաների ընտրությունից ոչ ուշ քան 9 ամիս հետո, որի ընթացքում ուսանողը հանձնում է ՄԹ-ի «Գրականության տեսության» և «Նյութը և մեթոդները» բաժինների նախնական տարբերակը՝ ստորագրված ղեկավարի կողմից, ըստ ղեկանի կողմից սահմանված ժամանակացույցի: Երկրորդ մշտադիտարկումն անց է կացվում ոչ ուշ քան պաշտպանությունից 1 ամսից առաջ, որի ընթացքում ուսանողը պետք է հանձնի ամբողջական ՄԹ-ի նախնական տարբերակը, ըստ ղեկանի կողմից սահմանված ժամանակացույցի:

5.7. Մինչ ատենախոսության պաշտպանությունը բոլոր ուսանողները պարտավոր են անցնել վերոհիշյալ ընթացակարգով:

5.8. Եթե ուսանողը հարգելի պատճառներով բաց է թողել վերոհիշյալ ընթացակարգերը, ապա նա կարող է համապատասխան փաստաթղթի ներկայացման եւ ֆակուլտետի ղեկանի թույլտվության դեպքում կրկին անցնել այն՝ ղեկանի կողմից հաստատված ժամկետում: Հակառակ դեպքում ուսանողը չի թույլատրվում ՄԳ թեզի պաշտպանությանը տվյալ ուսումնական տարում:

5.9. Աշխատանքը ավարտելուց հետո այն փոխանցվում է գրախոսին ոչ ուշ, քան ատենախոսության պաշտպանությունից 10 աշխատանքային օր առաջ, ով գրախոսում է աշխատանքը համաձայն Հավելված Գ-ում սահմանված ձեւաչափի:

## **6. ՄԹ-ի ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

6.1. Դրանք են.

□ ինքնուրույն գնահատել ՄԹ-ի թեմայի խնդրի հետ կապված արդիականությունը եւ նշանակությունը,

□ ղեկավարի հետ համատեղ կազմել ՄԹ-ի խնդրի հետ կապված հանձնարարությունը,

□ հավաքել եւ մշակել ՄԹ-ի թեմայի շրջանակներում տեղեկատվությունը,

□ ուսումնասիրել եւ գործնականորեն վերլուծել ստացված նյութերը,

□ ինքնուրույն ձեւակերպել ՄԹ-ի նպատակն ու խնդիրները,

□ անցկացնել հետազոտություններ, մշակումներ, ՄԹ-ի խնդրին համապատասխան հաշվարկներ, տալ խնդրի լուծման մասնագիտական փաստարկման իր տարբերակը,

□ հաշվի առնելով ղեկավարի եւ/կամ խորհրդատու(ների) կարծիքը՝ ընդունել

ինքնուրույն որոշումներ,  
□ ձեռակերպել ՄԹ-ի տեքստում խնդիրների լուծումը, անհրաժեշտության դեպքում պատրաստել գրաֆիկական նյութը, սլայդները եւ այլ փաստաթղթերը,  
□ ձեռակերպել տրամաբանորեն հիմնավորված եզրակացություններ, առաջարկություններ՝ ստացված արդյունքները գործնականում կիրառելու համար,  
□ պատրաստել զեկույց ՄԹ-ի պաշտպանության համար:  
6.2. Մագիստրանտը կրում է լրիվ պատասխանատվություն ՄԹ-ի բովանդակության համար:

### **7. ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

□ ՄԹ-ի ղեկավարը ՄԹ-ի ղեկավարման համար հատկացված ժամերի ծավալով՝ ձեռակերպում է ՄԹ-ի հանձնարարությունը,  
□ խորհուրդ է տալիս ուսանողին անհրաժեշտ հիմնական գրականությունը,  
□ ուսանողի հետ անցկացնում է սիստեմատիկ խորհրդատվություններ,  
□ ստուգում է աշխատանքի կատարումը, ինչպես նաեւ վերջինիս սույն չափորոշիչի հետ համապատասխանությունը,  
□ ներկա է գտնվում ՄԹ-ի պաշտպանությանը:

### **8. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՐԱԽՈՍԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԹ-Ի ՄԱԿԱՆՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՐԱ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

8.1. Մագիստրոսական թեզի գրախոսը պարտավոր է ներկայացնել ամբիոն ՄԹ-ի վերաբերյալ կարծիքը ոչ ուշ, քան ՄԹ-ի պաշտպանությունից 3 աշխատանքային օր առաջ:  
8.2. Ուսանողն ամբիոնից պետք է տեղեկացվի գրախոսի կողմից կատարված նկատառումներին, որպեսզի պատրաստի իր ելույթը պաշտպանության ժամանակ:  
8.3. Գրախոս կարող են լինել ԵՊԲՀ-ի համապատասխան ամբիոններից կամ այլ բուհերից, գիտական կազմակերպություններից դասախոսներ եւ այլն:  
8.4. Մագիստրոսական թեզի գրախոսը պետք է ունենա գիտական աստիճան կամ հանրային առողջության մագիստրոսի աստիճան: Որոշ դեպքերում կարող են նշանակվել նաեւ այն դասախոսները, ովքեր չունեն գիտական աստիճան, բայց կատարում են ակտիվ գիտահետազոտական աշխատանք կամ էլ ունեն աշխատանքային մեծ փորձ համապատասխան բնագավառներում՝ դրսևորելով իրենց որպես բարձր որակավորում ունեցող մասնագետներ:  
8.5. Գրախոսի ընտրությունը հաստատվում է համալսարանի համապատասխան ամբիոնի նիստում:  
8.6. Մագիստրոսական թեզերի համար բացասական գրախոսականը, եթե ատենախոսը համաձայն չի դրա հետ, չի խոչընդոտում պաշտպանությանը:

### **9. ՄԹ-Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

9.1. ՄԹ-ի պաշտպանության նպատակը շրջանավարտի պատրաստվածության մակարդակի որոշումն է մասնագիտական խնդիրներ լուծելու համար՝ համաձայն բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափանիշի պահանջներին:  
9.2. ՄԹ-ի պաշտպանությանը թույլատրվում է այն անձը, ով հաջողությամբ ավարտել է հիմնական մասնագիտական կրթական ծրագիրը:

9.3. Իր աշխատանքում ՊՈՀ-ն առաջնորդվում է «ՀՀ-ի բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական ավարտական որակավորման կարգ»-ով եւ սույն չափորոշիչով:

9.4. ՊՈՀ-ի ֆունկցիաները, ՄԹ-ի մակարդակի գնահատման չափանիշները եւ պաշտպանության որակը կայանում են հետեւյալում.

□ ՊՈՀ-ը շնորհում է որակավորում եւ, հաշվի առնելով շրջանավարտի (մագիստրոսի) ելույթը, տալիս է ՄԹ-ի ավարտական գնահատականը: ՊՈՀ-ը գնահատում է ելույթի գրագիտությունը, մասնագիտական բառապաշարի իմացության մակարդակը, հարցերին մասնագիտորեն պատասխանելու ունակությունը, պատկերազարդ նյութերի ներկայացման ամբողջականությունը, տեքստի եւ ՄԱ-ի գրաֆիկական մասի մեջ նյութերի ներկայացման մակարդակը համաձայն խնդրին, գնահատում է գիտելիքների մակարդակը:

□ Ներկայացված աշխատանքի եւ մասնագետի պատրաստվածության մակարդակի մասին եզրակացություն ներկայացնելիս՝ ՊՈՀ-ը կողմնորոշվում է ՊՈՀ-ի անդամների կարծիքով՝ հաշվի առնելով գրախոսի կարծիքը:

□ ՊՈՀ-ի պարտականությունների մեջ է մտնում ուսանողների պատրաստման կատարելագործմանն ուղղված հանձնարարականների պատրաստումը ՊՈՀ-ի աշխատանքների արդյունքների հիման վրա:

9.5. ՄԹ-ի պաշտպանությունն անց է կացվում ՊՈՀ-ի բաց նիստի ժամանակ՝ կազմի ոչ պակաս, քան 2/3-ի մասնակցությամբ, ՊՈՀ-ի աշխատանքների ցուցակին համապատասխան:

9.6. ՊՈՀ-ի քարտուղարի պարտականությունները՝

□ կազմել ՊՈՀ-ի նիստերի պլանը (ՄԹ-ի պաշտպանությունների գրաֆիկը),

□ տեղեկացնել ՊՈՀ-ի անդամներին գալիք նիստերի մասին, ապահովել քվորումը,

□ հատուկ ցուցափեղկի վրա տեղադրել տեղեկատվություն ՄԹ-ի գալիք պաշտպանությունների մասին՝ թեմաների, որակավորվողի եւ ղեկավարի ազգանունների նշումով,

□ պատրաստել փաստաթղթեր եւ նյութեր ՊՈՀ-ի նիստի համար,

□ կազմել ՊՈՀ-ի նիստերի քաղվածքները,

□ պատրաստել տեղեկատվություն ՊՈՀ-ի ղեկավարի համար՝ նիստերի քաղվածքների հիման վրա,

□ ՄԹ-ն պաշտպանությունից հետո հանձնել արխիվ:

## **10. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ**

10.1. ՊՈՀ-ի նիստից առաջ բոլոր անդամներին բաժանվում է տեղեկատվություն մագիստրանտների մասին, որոնց պաշտպանությունը պլանավորված է տվյալ նիստի համար, ինչպես նաեւ ՊՈՀ-ի անդամների բլանկները:

- ՊՈՀ-ի քարտուղարը ՊՈՀ-ի ներկայացուցչին է փոխանցում մագիստրոսական թեզերը՝ ղեկավարի եւ գրախոսի կարծիքների հետ միասին, ով ՊՈՀ-ի ներկայացուցիչներին եւ ներկաներին տեղեկացնում է մագիստրոսական աշխատանքի թեման, մագիստրանտի ազգանուն, անուն, հայրանունը եւ ղեկավարի ազգանուն, անուն, հայրանունը,

- լսվում է մագիստրանտի զեկույցը

- լսվում է գիտական ղեկավարի կարծիքը (ղեկավարի բացակայության դեպքում կարծիքը կարդում է նախագահը),

-լսվում է գրախոսությունը (ընդդիմախոսի բացակայության դեպքում կարծիքը կարդում է նախագահը),

-մագիստրոսին տրվում է գրախոսի նկատառումներին եւ խորհուրդներին արձագանքելու հնարավորություն,

- լսվում են ՊՈՀ-ի անդամների հարցերը թեզի վերաբերյալ խնդիրների շուրջ եւ մագիստրանտի պատասխանները այդ հարցերին,

- գիտական քննարկում, որին կարող են մասնակցել պաշտպանությանը ներկա գտնվողները,

- ՊՈՀ-ի նախագահը հայտարարում է մագիստրոսական թեզի պաշտպանության ավարտը:

10.2. Մագիստրանտի զեկույցի համար հատկացված ժամանակը՝ մինչեւ 20 րոպե:

10.3. Մագիստրանտի զեկույցը պետք է ներառի հետեւյալ բաղադրիչները.

- Առաջին մասում ներկայացվում է աշխատանքի թեմայի արդիականությունը, տրվում է գիտական խնդրի, ինչպես նաեւ աշխատանքի նպատակի եւ խնդիրների նկարագրությունը, որոնց հետ կապված այնուհետեւ անհրաժեշտ է բացորոշել աշխատանքում կիրառված հետազոտության մեթոդները եւ ներկայացնել աշխատանքի ընդհանուր կառուցվածքը:

- Երկրորդ մասում ներկայացվում է աշխատանքի գլուխների հակիրճ բովանդակությունը՝ ուշադրություն դարձնելով փաստական նյութին, որի հիման վրա կատարվել է հետազոտությունը, եւ հիմնական արդյունքները:

- Եզրափակիչ մասում անհրաժեշտ է թվարկել աշխատանքի ընդհանուր եզրակացությունները:

- Հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանները պետք է լինեն հստակ եւ արտացոլեն խնդրի էությունը: Անհրաժեշտության դեպքում հարցերի պատասխաններն պետք է հիմնավորել օրինակներով:

10.4. ՊՈՀ-ի անդամները գնահատում են ներկայացված թեզը համապատասխան գնահատման թերթիկի հիմնա վրա (Հավելված Ե):

### **11. Մագիստրոսական ատենախոսության գնահատման կարգը**

11.1. Մագիստրոսական թեզը գնահատվում է հետեւյալ բաղադրիչների գնահատականների միջին արդյունքով.

Միջառարկայական համակարգչային քննություն

Մագիստրոսական թեզի գրավոր աշխատանքի գնահատում (Հավելված Դ)

Ատենախոսության ներկայացում եւ պաշտպանություն

11.2. Գնահատականները հայտարարվում են պաշտպանության օրը՝ ՊՈՀ-ի նիստերի քաղվածքները պատշաճ կերպով ձեւակերպելուց հետո:

### **12. ՊԵՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄԸ:**

12.1 ՊՈՀ-ը որակավորման դրական արդյունքների դեպքում ընդունում է որոշում շրջանավարտին համապատասխան որակավորում եւ պետական բարձրագույն մասնագիտական կրթությունը հավաստող դիպլոմ շնորհելու մասին:

12.2. Հաշվի առնելով ՊՈՀ-ի աշխատանքների արդյունքները՝ նախագահը կազմում է հաշվետվություն:

12.3. ՄԹ-ի պաշտպանության արդյունքում անբավարար գնահատական ստացած անձինք հեռացվում են ԵՊԲՀ-ից: ԵՊԲՀ-ում այդ անձանց վերականգնման դեպքում

նշանակվում են ՄԹ-ի նոր թեմա, դեկավար, գրախոս եւ խորհրդատուներ (անհրաժեշտության դեպքում): ՄԹ-ի կատարման եւ պաշտպանության ժամկետները նշանակվում են ռեկտորի հրամանով, այդ դեպքում էլ ՄԹ-ի կատարման եւ պաշտպանության կարգը պետք է համապատասխանեն սույն չափանիշին:

12.4. ՄԹ-ի կրկնակի պաշտպանությունը նշանակվում է ոչ շուտ, քան 1 տարի եւ ոչ ուշ, քան 5 տարի առաջին պաշտպանությունից հետո: Կրկնակի պաշտպանությունը չի կարող 2 անգանից ավել նշանակվել:

12.5. Խնդիրները, որոնք չեն քննարկվում սույն չափանիշի մեջ, լուծվում են համաձայն ՀՀ սահմանադրության եւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության համապատասխան օրենքների, կարգերի ու կանոնակարգերի:

*ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ*

***ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ***

***Անուն, ազգանուն, հայրանուն***

***Մասնագիտություն՝***

***Հանրային առողջություն և առողջապահություն***

***Թեմա՝***

***Գիտական ղեկավար՝***

***Ամբիոնի վարիչ՝***

***ԵՐԵՎԱՆ 2013***

**ԵՐԵՎԱՆԻ Մ.ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ**

Հետազոտության պլանի ծավալը պետք է լինի 4-5 տպագրական էջ, որը չի ներառում տիտղոսաթերթը:

Հետազոտության պլանի տեքստը պետք է հավաքվի համակարգչով՝ A4 ֆորմատի սպիտակ թղթի վրա (210 X 297) յուրաքանչյուր թղթին 1 էջ 1.5 միջակայքով, սև գույնով, Sylfaen 12 տառաչափով: Էջերը պետք է ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ, ներքևից՝ 25 մմ:

Հետազոտության պլանի բաղադրիչ մասերը՝

1. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ
2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ
3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ
4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ
5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ
6. ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՍՑԵԱԳՐՈՒՄԸ՝ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ
7. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

Հղումների ձևաչափ՝

- Հեղինակները ներկայացվում են այբբենական կարգով՝ նշելով հղումների համարները տեքստում: Ցանկում սկզբից նշվում են հայկական հեղինակները, ապա ռուսական և արտասահմանյան:
- Գիրք՝ հեղինակի/ներ/ ազգանունը, անվան առաջին տառը, գրքի անվանումը, հրատարակչությունը, քաղաքը, տպագրության տարեթիվը, հատորը, էջերը:
- Հոդված՝ հեղինակի/ներ/ ազգանունը, անվան առաջին տառը, պարբերականի անվանումը, քաղաքը, հատորը, պարբերականի համարը, հոդվածի էջահամարը:
- Համացանց՝ հեղինակի/ներ/ ազգանունը, անվան առաջին տառը, հոդվածի անվանումը, համացանցում հոդվածի տեղադրման ամսաթիվը, կայքի հասցեն, հղում կատարելու ամսաթիվը:

**ԵՐԵՎԱՆԻ Մ.ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Մագիստրոսական թեզի գնահատման չափորոշիչներ գրախոսի համար**

Ուսանող (Ա.Հ.Ա.) \_\_\_\_\_

Ամբիոն \_\_\_\_\_

Կրթական ծրագիր \_\_\_\_\_

Թեմայի անվանումը \_\_\_\_\_

Գրախոս (Ա.Հ.Ա., գիտ. կոչում/աստիճան) \_\_\_\_\_

**Գնահատման չափորոշիչներ**

1. Մասնագիտական իրազեկությունը
2. Հետազոտության նորարարություն
3. Հետազոտության մեթոդների կիրառում
4. Վերլուծելու, փաստերը գնահատելու, տրամաբանելու կարողություն
5. Հետազոտության համար ընտրված գրականության ընտրությունը
6. Ընդունված չափորոշիչներին համապատասխան աշխատանքի ձևակերպում

ԵՐԵՎԱՆԻ Մ.ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒԼՏԵՏ  
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ (ՄԹ) ԳԼԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Անուն Ազգանուն \_\_\_\_\_

Խումբ \_\_\_\_\_

Ամսաթիվ \_\_\_\_\_

Ստորև ներկայացված յուրաքանչյուր չափորոշիչ գնահատել 0-5 թվերի սանդղակով (կարող է օգտագործվել նաև 0.5), որտեղ՝

- 0 չափորոշիչը ներկայացված չէ,
- 0,5-4,5 չափորոշիչը մասամբ է ներկայացված,
- 5 չափորոշիչը ամբողջությամբ է ներկայացված:

1. ՁևԱԶՍՓ \_\_\_\_\_

- Տիտղոսաթերթը համապատասխանում է տրված օրինակին,
- Ձևաչափը համապատասխանում է՝ A4, 12 տառաչափ, տողերի միջև 1.5 միջակայք, էջերի լուսանցքը ձախից՝ 30 մմ, վերնից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ, ներքևից՝ 25 մմ պարամետրերին,
- ՄԹ-ի բոլոր էջերը, ներառյալ լուսաբանող նկարները, աղյուսակները, գծապատկերները, հավելվածը վերնագրված և համարակալված են,
- ՄԹ-ի բոլոր գլուխների անվանումները գրված են ուղիղ գլխատառերով (մեծատառերով, տառաչափը՝ 14),
- ՄԹ-ի ներկայացման գրելառճը գիտական է:

2. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ \_\_\_\_\_

- Թեզի բոլոր բաժինների համապատասխան էջերը ըստ հերթականության տրված են:

3. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 1էջ \_\_\_\_\_

- Թեզի ուսումնասիրության խնդիրը, նպատակը(ները), մեթոդները, արդյունքները և եզրակացությունները ներկայացված են:

4. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ \_\_\_\_\_

- Հետազոտության թեման արդիական է,
- Նպատակը(ները) հստակ սահմանված է(են),
- Խնդիրները հստակ ներկայացված են և բխում են հետազոտության նպատակներից:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ \_\_\_\_\_

- Թեզի թեմայի վերաբերյալ տեղական և արտասահմանյան գրականության վերլուծությունը ներկայացված է:

6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ \_\_\_\_\_

- Հետազոտության նպատակը(ները) հստակ սահմանված է(են),

- Հետազոտության իրականացման վայրը և թիրախը նկարագրված են,
- Հետազոտության նախագիծը նկարագրված է և ընտրությունը հիմնավորված,
- Հետազոտության ընտրանքի հաշվարկը և չափը ներկայացված է,
- Հետազոտության գործիքը մանրամասն նկարագրված է (հուսալիության և պիտանելիության հղումներ),
- Տվյալների մուտքագրման համար կիրառված ծրագիրը, ստուգման և տվյալների վիճակագրական վերլուծության եղանակները նշված են,
- Հետազոտության բարոյագիտական տեսության խնդիրների հասցեագրված են:

**7. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ \_\_\_\_\_**

- Հետազոտության արդյունքում ստացված արդյուքները մանրամասն ներկայացված են և իրատեսական են:

**8. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ \_\_\_\_\_**

- Ստացված արդյուքների տրամաբանական մեկնաբանումը տրված է,
- Հնարավոր պատճառահետևանքային կապերը վերհանված և վերլուծված են,
- Նմանատիպ այլ հետազոտությունների արդյունքների հետ համեմատությունը կատարված է,
- Հետազոտության սահմանափակումները նշված են:

**9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ \_\_\_\_\_**

- Հետազոտության արդյունքում ստացված եզրակացությունները մանրամասն ներկայացված են և համապատասխանում են հետազոտության նպատակին
- Հետազոտության արդյունքների հիման վրա կատարած առաջարկությունները ներկայացված են:

**10. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ \_\_\_\_\_**

- Հղումների ճիշտ ձևաչափը պահպանված է,
- Հղումների քանակը համապատասխանում է պահանջներին (15-25 հեղինակ):

Ընդամենը՝ ընդհանուր գումարը կարող է տատանվել 0-50 սահմաններում:  
Ստացված արդյունքը բազմապատկվում է 0.2 գործակցով:

Ընդամենը՝ \_\_\_\_\_

Վերջնական գնահատական \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

\_\_\_\_\_  
Ա.Հ.Ա.

**ԵՐԵՎԱՆԻ Մ.ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒԼՏԵՏ  
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ (ՄԹ) ԲԱՆԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

Անուն Ազգանուն \_\_\_\_\_  
Ամսաթիվ \_\_\_\_\_

Խումբ \_\_\_\_\_

Ստորև ներկայացված յուրաքանչյուր չափորոշիչ գնահատել 0-5 (0.5 այդ թվում) թվերի սանդղակով, որտեղ՝

- 0 չափորոշիչը ներկայացված չէ,
- 0,5-4,5 չափորոշիչը մասամբ է ներկայացված,
- 5 չափորոշիչը ամբողջությամբ է ներկայացված:

**1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ \_\_\_\_\_**

Հետազոտության թեման արդիական է,  
Նպատակը(ները) հստակ սահմանված է(են),  
Խնդիրները հստակ ներկայացված են և բխում են հետազոտության նպատակներից:

**2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ \_\_\_\_\_**

Հետազոտության իրականացման վայրը և թիրախը նկարագրված են,  
Հետազոտության նախագիծը նկարագրված է և ընտրությունը հիմնավորված,  
Հետազոտության ընտրանքի հաշվարկը և չափը ներկայացված է,  
Հետազոտության գործիքը նկարագրված է,  
Տվյալների մուտքագրման համար կիրառված ծրագիրը և տվյալների վիճակագրական վերլուծության եղանակները նշված են:

**3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ \_\_\_\_\_**

Հետազոտության արդյունքները լիարժեք ներկայացված են:

**4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ \_\_\_\_\_**

Ստացված արդյունքների տրամաբանական մեկնաբանումը տրված է,  
Հնարավոր պատճառահետևանքային կապերը վերհանված և վերլուծված են,  
Նմանատիպ այլ հետազոտությունների արդյունքների հետ համեմատությունը կատարված է,  
Հետազոտության սահմանափակումները նշված են:

**5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ \_\_\_\_\_**

Հետազոտության արդյունքում ստացված եզրակացությունները ներկայացված են և համապատասխանում են հետազոտության նպատակին,

Հետազոտության արդյունքների հիման վրա կատարած առաջարկությունները ներկայացված են և իրատեսական են:

6. ՄԹ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ \_\_\_\_\_

Սլայդերը տրամաբանական հերթականությամբ ներկայացված են ,  
Սլայդերը վերնագրված են և ճիշտ ձևաչափը պահպանված է,  
Նկարները և գծապատկերները տեղին օգտագործված են:

7. ԺԱՄԱՆԱԿԸ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ Է \_\_\_\_\_

8. ՄԹ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՈՃԸ \_\_\_\_\_

Ներկայացնողը ինքնավստահ և համոզիչ է,  
Տեսողական կոնտակտը լսարանի հետ պահպանված է:

9. ՄԹ-Ի ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀԱՐՑԵՐԻՆ ՏԱԼԻՍ Է ՍՊԱՌԻՉ ՈՒ ԼԻԱՐԺԵՔ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐ  
\_\_\_\_\_

10. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ \_\_\_\_\_

Ընդամենը՝ ընդհանուր գումարը կարող է տատանվել 0-50 սահմաններում:  
Մտացված արդյունքը բազմապատկվում է 0.2 գործակցով:

Ընդամենը՝ \_\_\_\_\_

Վերջնական գնահատական \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

\_\_\_\_\_  
Ա.Հ.Ա.